ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 261-Ա **17 հուլիսի 2023 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 14-րդ հոդվածի դրույթներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 1-ին, 2-րդ գլուխների պահանջները

որոշում եմ՝

1. Հայտարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաց մրցույթները:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաց մրցույթների անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել մրցույթների նախապատրաստական աշխատանքները:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Լուսինե Վարդանյանին:

17.07.2023

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք.Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2023 թ. հոկտեմբեր 17-ի
N261 - Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաց մրցույթների անցկացման ժամանակացույց

1. «Լճաշենի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի 3-ին, ժամը՝ 11^{00}-ին
2. «Ծակքարի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի 3-ին, ժամը՝ 15^{00}-ին
3. «Դպրաբակ ԲԱ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի 4-ին, ժամը՝ 11^{00}-ին
4. «Ծովագյուղի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի 4-ին ժամը՝ 15^{00}-ին
5. «Լուսակունքի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի 5-ին, ժամը՝ 11^{00}-ին
6. «Ակունքի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի 5-ին, ժամը՝ 15^{00}-ին
7. «Երանոսի ԲԱ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի 10-ին, ժամը՝ 11^{00}-ին
8. «Ձորագյուղի ԲԱ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի 10-ին ժամը՝ 15^{00}-ին
9. Վարդենիկի ԱԿ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի 11-ին, ժամը՝ 11^{00}-ին
10. «Դդմաշենի ԲԱ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի 11-ին, ժամը՝ 15^{00}-ին
11. «Կարմիրգյուղի ԲԱ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի 12-ին, ժամը՝ 11^{00}-ին
12. «Վարդաձորի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի 12-ին, ժամը՝ 15^{00}-ին
13. «Աստղաձորի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի 17-ին, ժամը՝ 11^{00}-ին
14. «Ն.Գետաշենի ԲԱ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի 17-ին, ժամը՝ 15^{00}-ին
15. «Արծվանիստի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի 18-ին, ժամը՝ 11^{00}-ին
16. «Ձոլաքարի ԲԱ.»ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի 18-ին, ժամը՝ 15^{00}-ին
17. «Ծովինարի ԲԱ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի 19-ին, ժամը՝ 11^{00}-ին

18. «Ծովասարի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի	19-ին, ժամը՝ 15^{00}-ին
19. «Նորատուսի ԲԱ» ՊՈԱԿ ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի	24-ին, ժամը՝ 11^{00}-ին
20. «Գեղհովիտի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի	24-ին, ժամը՝ 15^{00}-ին
21. «Ծովակի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի	25-ին, ժամը՝ 11^{00}-ին
22.«Գեղամասարի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի	25-ին, ժամը՝ 15^{00}-ին
23. «Կարճաղբյուրի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի	26-ին, ժամը՝ 11^{00}- ին
24. «Լիճքի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի	26-ին, ժամը՝ 15^{00}-ին
25.«Գանձակի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի	31-ին, ժամը՝ 11^{00}-ին
26. «Վաղաշենի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2023թ. հոկտեմբերի	31-ին, ժամը՝ 15^{00}-ին
27. «Լճափի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2023թ. նոյեմբերի	1-ին, ժամը՝ 11^{00}- ին

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049